



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Հայաստանի ազգային ազրարային համալսարանի
ռեկտոր՝ Վ.Է. Ուռուտյան

« 11 » փետրվարի 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**Գ.00.08 «Կենդանաբանություն, մակաբուծաբանություն, էկոլոգիա»
մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար ներկայացված Անուշ Սամվելի Առաքելյանի
«Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի ջրային
էկոհամակարգերի ձկնաշխարհը» թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Վերջին տասնամյակների ընթացքում մարդու ակտիվ տնտեսական գործունեության ազդեցության ներքո Հայաստանի Հանրապետության շատ ջրակայաների և գետերի ձկնաշխարհում շարունակվում են տեղի ունենալ էական փոփոխություններ, որոնց արդյունքում տեղաբնակ շատ ձկնատեսակներ դուրս են մղվում իրենց զբաղեցրած էկոլոգիական խորշերից կամ ոչնչանում են՝ իրենց տեղը հաճախ զիջելով այլ տարածաշրջաններից ներմուծված և կլիմայավարժված տեսակներով: Նման գործընթացները կարող են անվերահսկելի լինել հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ ձկնաշխարհի տեսակային կազմը լիարժեք պարզված և ուսումնասիրված չէ: Նման տարածաշրջաններին են պատկանում Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերը, որոնց ջրային էկոհամակարգերի՝ գետերի, լճերի ու ջրամբարների մեծ մասի ձկնաշխարհի տեսակային կազմը մինչ այժմ համեմատաբար վատ է ուսումնասիրված, իսկ ձկնատեսակների էական մասի կենսաբանական առանձնահատկություններն ընդհանրապես ուսումնասիրված չեն միաժամանակ, վերոնշյալ մարզերի շատ գետերի հունների վրա վերջին տարիներին կառուցվել են մեծաքանակ ջրատեխնիկական կառույցներ՝ հիդրոէլեկտրակայաններ և ջրամբարներ, որոնց շահագործման հետևանքները բացասաբար են անդրադառնում տեղաբնակ ձկնատեսակների բնականոն կենսագործունեության վրա՝ էապես նվազեցնելով նրանց կենսաբազմազանությունը և փոփոխելով էկոլոգիական պայմանները գետերի առանձին հատվածներում:

Ատենախոսությունը գրված է հայերեն և շարադրված է համակարգչային 146 էջի վրա, որին կցված է 99 էջ հավելված և պարունակում է 60 աղյուսակ և 73 նկար: Ատենախոսության թեմայով հրատարակված է 11 գիտական հոդված, որոնք իրենց բովանդակությամբ համապատասխանում են կատարված աշխատանքի հիմնական

դրույթներին: Օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է 108 անուն հրապարակումներ ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով, իսկ նրա դրույթները ունեն տրամաբանական հաջորդականություն և սահուն անցումներ: Գրական տեղեկություններն օգտագործված են նպատակային, համապատասխան վերլուծություններով, հղումները կատարված են անհրաժեշտությունից ելնելով: Հիշատակված գրական աղբյուրները համապատասխանում են կատարված հետազոտությունների բնույթին և էությանը, մեջբերված են տեղին և համապատասխանում են ատենախոսության ողջ բովանդակությանը:

Ատենախոսության յուրաքանչյուր գլխում ատենախոսը ներկայացնում և վերլուծում է իր առջև դրված նպատակային խնդիրները: Այսպես, ատենախոսության **ներածությունում** ներկայացված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները, ինչպես նաև աշխատանքի գիտագործնական նշանակությունը և փորձահավաստիությունը:

Ատենախոսության **առաջին գլխում** գրական ակնարկի ձևով ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի գետերի, լճերի և ջրամբարների, նրանց էկոլոգաաշխարհագրական բնութագրերի, էկոլոգիական վիճակի, ինչպես նաև գետերի վրա կառուցված ջրատեխնիկական կառույցների մասին տվյալները, որպես ձկնաշխարհի ձևավորման և բազմազանության վրա ազդող գործոններ:

Ուսումնասիրությունների կատարման մեթոդները և օգտագործված փաստական նյութի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը հեղինակը ներկայացրել է **երկրորդ գլխում**: Ընդհանուր առմամբ Ա. Առաքելյանի կողմից որսվել է 2957 առանձնյակ, որոնք պատկանել են 16 ձկնատեսակի: Կատարվել են 13 ձկնատեսակների՝ արևելյան տառեխիկի, կողակի, Կուրի բեղաձկան, մուրձայի, արևելյան թեփուղի, Կուրի և անդրկովկասյան սպիտակաձկների, ամուրյան նրբաձկան, արծաթափայլ կարասի, քառթակի, ծականի, ոսկեգույն ծականի, Կուրի լերկաձկան, տարբեր պոպուլյացիաների ընտրանքների ձևաբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն: Ուսումնասիրվել են առանձին ձկնատեսակների՝ արևելյան տառեխիկի, Կուրի բեղաձկան, արծաթափայլ կարասի, քառթակի, անդրկովկասյան սպիտակաձկան, կենսաբանական մի շարք ցուցանիշները՝ բեղունությունը, գծային և քաշային աճը, վտառների տարիքային և սեռային կազմը: Գնահատվել է նաև ձկների հանդիպման հաճախականությունը ըստ գետերի և կատարվել է տարբեր գետերի ձկնաշխարհների նմանության գործակցի որոշում ըստ Ջակարդի ինդեքսի: Իրականացվել են նաև 21 ՓՀԷԿ-ի ձկնապաշտպան կառույցների ուսումնասիրություններ չափագրման միջոցներով:

Աշխատանքը կատարված է ժամանակակից մեթոդական բարձր մակարդակով: Ստացված տվյալները ենթարկվել են վիճակագրական մի շարք վերլուծությունների, որի համար կիրառվել է Stat soft statistics 12.5 վերլուծական փաթեթը, MS Excel և MS Word ծրագրային փաթեթները:

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրանց քննարկումը բերվում են երրորդ և չորրորդ գլուխներում.

Երրորդ գլխում վերլուծության են ենթարկված ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերում հայտանբերված 16 ձկնատեսակի հանդիպման հաճախականությունը ըստ առանձին գետերի, ինչպես նաև ներկայցված են մի շարք ձկնատեսակների ձևաբանական և կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ արդյունքները և քննարկումը:

Չորրորդ գլխում քննարկվում են Դեբեդ և Աղսուե գետերի ավազաններում կառուցված և ուսումնասիրության ենթարկված 21 ՓՀԷԿ-ի ձկնապաշտպան կառուցվածքների առանձնահատկությունները և դրանց համապատասխանությունը ձկների կենսաբանական պահանջմունքներին:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփվել են 6 կետից բաղկացած **Եզրակացություններում և ներկայացվել են 3 կետից բաղկացած առաջարկություններ:** Եզրակացությունները տրամաբանորեն բխում են ատենախոսության բովանդակությունից և արտացոլում են ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնադրույթները լիովին արտացոլված են ատենախոսի հեղինակությամբ կամ համահեղինակությամբ կատարված 11 հրապարակումներում:

Սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին:

Աշխատաքը միանշանակ արժանի է դրական և բարձր գնահատականի: Սակայն ատենախոսությունում առկա են սակավաթիվ տեխնիկական վրիպակներ և որոշ բացթողումներ: Մասնավորապես, աշխատանքում ցանկալի կլիներ, որ հաշվի առնվեր հետևյալը.

1. Ձկների տեսակային կազմի որոշումը կատարվել է հիմնականում ձևաբանական հատկանիշների ուսումնասիրությունների հիման վրա և ցանկալի կլիներ նաև իրականացնել ձկների գենետիկական ուսումնասիրություններ, ինչը հնարավորություն կտար հստակեցնել ուսումնասիրված ծականի *Cobitis* sp. և քառթակի *Gobio* sp. կարգաբանական դիրքը:
2. Առավել տարածված ձկնատեսակների միջպոպուլյացիոն տարբերությունները որոշված են միայն հեղինակի կողմից հավաքված նյութի հիման վրա: Ատենախոսի կողմից բերված տվյալները ցանկալի կլիներ, որ համեմատվեին այլ հեղինակների կողմից կատարված աշխատանքների հետ՝ ձկնատեսակների միջպոպուլյացիոն տարբերությունների առավել հստակ բացահատման համար:
3. ՓՀԷԿ-երի ազդեցության գնահատման ժամանակ արձանագրված չեն տվյալներ գետերում ջրի էկոլոգիական թողքի, ինչպես նաև ջրի որակի որոշ կենսաբանական և քիմական ցուցանիշների վերաբերյալ, որը առավել հստակ պատկեր ցույց կտար ՓՀԷԿ-ի ազդեցությունը ձկնաշխարհի վրա:

Նշված դիտողությունները և ցանկությունները, սակայն, չեն ազդում աշխատանքի գիտական արժեքի վրա և չեն նվազեցնում աշխատանքի բարձր գնահատականը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀԱԱՀ-ի «Անասնաբուծության» ու «Անտառագիտության և ագրոէկոլոգիայի» ամբիոնների համատեղ կայացած նիստում (արձ. թիվ 1, 07.02.2020թ.), որին մասնակցել են եկու ամբիոնների վարիչները՝ գ.գ.թ., դոցենտ Տ.Ժ.Չիթյանը և կենս.գ.թ., դոցենտ Հ.Պ.Խորշոռյանը, ինչպես նաև գ.գ.դ., պրոֆեսոր Մ.Հ.Գալստյանը, կենս.գ.թ., դոցենտ Կ.Շ.Սարգսյանը, կենս.գ.թ., դոցենտ Ա.Վ.Մկրտչյանը, գ.գ.թ., դոցենտ Մ.Ա.Մարկոսյանը, գ.գ.թ., դոցենտ Հ.Է. Խաչատրյանը, գ.գ.թ., դոցենտ Ի.Կ.Ոսկանյանը, գ.գ.թ, դոցենտ Ա.Վ.Ազիզյանը, գ.գ.թ, դոցենտ Զ.Ս.Փամբուխչյանը և գ.գ.թ. Ժ.Տ.Չիթյանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսի կողմից իրականացված ուսումնասիրությունները կատարվել են գիտական բարձր մակարդակով: Ատենախոսության նյութերը, հիմնական դրույթներն ու ստացված արդյունքները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող և Կուր գետի ավազանին պատկանող գետերում ու ջրակալներում բնակվող ձկնատեսակների որոշման նպատակով տարվող աշխատանքներում: Ուսումնասիրությունների արդյունքները կարող են ներգրավվել «Կենդանաբանություն», «Կենդանիների էկոլոգիա» և այլ առարկաների գծով բուհական դասընթացների ծրագրերում:

Այսպիսով, Անուշ Սամվելի Առաքելյանի կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկնաշխարհը» թեմայով ատենախոսությունը ավարտուն, լիարժեք գիտական աշխատանք է և իր արդիականությամբ, փաստացի նյութի ծավալով, գիտական նորույթով, տեսական և կիրառական նշանակությամբ լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Անուշ Սամվելի Առաքելյանն, արժանի է Գ.00.08-«Կենդանաբանություն, մակարուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Անասնաբուծության ամբիոնի վարիչ, գ.գ.թ., դոցենտ
Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի վարիչ,
կենս.գ.թ., դոցենտ
Գ.գ.դ., պրոֆեսոր

S. Zhithyan Տ.Ժ.Չիթյան
H. Khoshrobyan Հ.Պ.Խորշոռյան
Մ.Հ.Գալստյան

Գ.գ.դ., պրոֆեսոր Մ.Հ.Գալստյանի, գ.գ.թ. դոցենտ Տ.Ժ.Չիթյանի և կենս.գ.թ., դոցենտ Հ.Պ.Խորշոռյանի ստորագրությունները հաստատում են:

ՀԱԱՀ գիտական քարտուղար, գ.գ.թ., դոցենտ



Գ.Վ.Ավագյան